ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻՆ ԻՐԱԿԱՆՑՎՈՂ ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՂԵԱՆՑԵՐԻ ՀԵՆԱՐԱՆՆԵՐԻ ՈՒՂՂԱՁԻԳ ԳԾԱՆՇՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՏԿԵՆ-ՀԲՄԱԾՁԲ-2022/01Շ-2

«26» «08» 2022թ.

ք. Երևան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Ա.Երիցյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), *մի կողմից, և «Ռեգիոնստրոյսերվիս»* ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Հ. Ստեփանյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհներին իրականցվող հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի *մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի* պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին, **ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշման** համապատասխան, կատարման ժամկետ է սահմանվում՝ մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված

գները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը 2022թ. համար կազմում է 167 839 560 (հարյուր վաթսունյոթ միլիոն ութ հարյուր երեսունինը հազար հինգ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Հաջորդ տարիներին պայմանագրի կատարման գին կսահմանվի ըստ սույն պայմանագրի N 1.1 հավելվածով սահմված միավոր (1քմ) գնի հաշվարկով՝ ըստ յուրաքանչյուր տարվա համար համաձայնագրով հաստատված նշագծման մակերեսի:

Աշխատանքի կատարման գինը գործոնային է և կարող է փոփոխվել կախված սպասարկվող ճանապարհների երկարության, ճանապարհների վիճակի, ճանապարհների պահպանման մակարդակի փոփոխության հետ:

Հաջորդ տարիներին աշխատանքները կկատարվեն ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրով, պայմանագրի տեխնիկական առաջադրանքով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման յուրաքանչյուր դեպքի համար գանձվում է տուգանք տվյալ տարվա համար կնքված համաձայնագրի գումարի 0.5 տոկոսի չափով, իսկ ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ տվյալ տարվա համար կնքված համաձայնագրի գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.3 Եթե կատարողը երկու անգամ անընդմեջ թույլ է տալիս ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ աղյուսակով նախատեսված խախտումները և դրանք չի վերացնում նույն աղյուսակում նշված ժամկետում, պայմանագիրը ենթակա է միկողմանի լուծման:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կատարումը փուլային է և յուրաքանչյուր փուլի կատարումը ուղղակիորեն փոխկապակցված չէ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան ստացվելիք վերջնարդյունքի հետ: Յուրաքանրյուր ամիս ներկայացված կատարաղականին համամասնորեն որակավորման ապահովման գումարը ենթակա է նվազեցման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքների 100 տոկոսը կատարել անձամբ,պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, սեփական մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով:

Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին

ացումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.10 Պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.11 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.12 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն հաջորդ տարիների համար իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	«Ռեգիոնստրոյսերվիս» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3,	ք. Երևան, Միկոյան 4շ.29բն
ՀՀ կենտրոնական գանձապետարան	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011012136	Հ/Հ 1150021392572591
ՀՎՀՀ 02815457	ՀՀՎՀ 02835332
Գլխավոր քարտուղար	Հ. Ստեփանյան
Ա. Երիցյան	(ստորագրություն)
(ստորագրություն)	Կ.Տ.
Կ.Տ.	

Հավելված N 1
« » « » 2022թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/01Շ-2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի							
						կատարման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	2022թ. գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը
4	45231176/65	Ներկայացվում է ստորև	դրամ	77 880 000	1	Ներկայացվում է ստորև	Պայմանագիրը կնքվում է 5 տարի ժամկետով և կնքվելու տարվան հաջորդող չորս տարիների ընթացքում աշխատանքների կատարումը կիրականացվի յուրաքանչյուր տարի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքվելիք լրացուցիչ համաձայնագրով սահմանված ժամկետում, բայց ոչ ուշ քան 25.12.2026թ.
6	45231176/67	Ներկայացվում է ստորև	դրամ	42 000 000	1		
9	45231176/70	Ներկայացվում է ստորև	դրամ	47 959 560	1		

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
4-րդ, 6-րդ և 9-րդ չափաբաժինների համար

ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշման աշխատանքների պահպանման ձեռքբերման

ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշման աշխատանքների պահպանման աշխատանքները կապալառուն իրականացնում է ապահովելով ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի N 113-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական եվ ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշման աշխատանքների պահպանման աշխատանքների կատարման և ընդունման կարգի պահանջները:

Կապալառուն պարտավոր է ապահովել ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական եվ ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշումը և տեսանելիությունը համապատասխան ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի N 113-Ն որոշմամբ հաստատված նորմերի:

1. Գծանշումը կարող է կատարվել տարբեր նյութերով (ներկով, ջերմապլաստիկով, սառը պլաստիկով, պոլիմերային ժապավեններով, հատային կաղապարներով, լուսանդրադարձիչներով և այլն):

2. Գծանշումներ կատարելիս՝ դրանց շեղումը նախագծային դրույթից չպետք է գերազանցի 5 սմ-ը:

3. Գծանշվող գծերի չափերի շեղումները չպետք է գերազանցեն՝

1) 1 սմ-ը՝ գծի լայնությամբ.

2) 5 սմ-ը՝ նրբագծերի և խզվածքների երկարությամբ:

4. Գծանշումը երթևեկելի մասի մակերևույթից չպետք է բարձր լինի 6 մմ:

5. Վարորդների տեսողական կողմնորոշման համար կիրառվող լուսանդրադարձիչները՝ ինքնուրույն կամ հորիզոնական գծանշման հետ զուգակցված, երթևեկելի մասի մակերևույթից չպետք է բարձր լինեն 20 մմ:

6. Գծանշման գործակիցները հետևյալն են՝

1) չոր վիճակում գծանշման համար պայծառությունը (b_V).

2) չոր ծածկույթի դեպքում օրվա մութ ժամերի պայմանների համար լուսանդրադարձումը (R_L).

3) անձրևի և թաց ծածկույթի դեպքում օրվա մութ ժամերի պայմանների համար լուսանդրադարձումը (R_W).

4) չոր վիճակում ցրված լույսի կամ արհեստական լուսավորության դեպքում լուսարտացոլումը (Qd):

7. Ճանապարհային պայմաններից ելնելով՝ գծանշման գործակիցներն ընտրվում են ըստ N 1 և N 2 աղյուսակների:

8. Ջերմապլաստիկով, սառը պլաստիկով կամ նման այլ նյութերով կատարված գծանշումը պետք է ունենա մեկ տարվանից ոչ պակաս, իսկ լաքաներկանյութով կատարված գծանշումը՝ 6 ամսվանից ոչ պակաս գործառութային երկարակեցություն:

9. Գծանշման գործառութային երկարակեցությունը որոշվում է այն ժամանակահատվածով, որի ընթացքում գծանշումը համապատասխանում է սույն կանոնների պահանջներին, և 50 մ երկարությամբ յուրաքանչյուր վերահսկվող տեղամասում գծանշման մակերեսի մաշվածքը չի գերազանցում 50%-ը՝ գծանշումը ներկով կատարելու դեպքում, իսկ գծանշումը ջերմապլաստիկով կամ երկարակյաց այլ նյութերով կատարելու դեպքում՝ 25%-ը:

10. Նոր գծապատկերով գծանշում կատարելու դեպքում հին գծանշումը չպետք է տեսանելի լինի:

11. Ճանապարհների գծանշումը, բացառությամբ չորրորդ կարգի ճանապարհների, պետք է կատարվի լուսանդրադարձիչ նյութերի կիրառմամբ:

12. Արհեստական լուսավորություն չունեցող ճանապարհների տեղամասերում **2.1-2.3** գծանշումների (նկար 15) սպիտակ գծերը պետք է կատարվեն լուսանդրադարձիչ նյութով (բացառությամբ ներքին լուսավորություն ունեցող կարճասյուների), իսկ **2.4-2.6** գծանշմամբ նշված (նկար 17) ճանապարհային ցանկապատները և ուղղորդ սարքվածքները պետք է ունենան լուսանդրադարձիչ տարրեր:

13. Ճանապարհային ցանկապատների մակերևույթին **2.4-2.6** գծանշումներով կամ առանց դրանց կիրառվող լուսանդրադարձիչ տարրերը երթևեկության ուղղությամբ երթևեկելի մասի աջ կողմում պետք է լինեն կարմիր, իսկ ձախ կողմում՝ սպիտակ կամ դեղին գույնի:

14. Գծանշումը շահագործման պահից օրվա բոլոր ժամերին պետք է լավ տեսանելի լինի (ծածկի վրա ձյան բացակայության պայմանում):

15. Ճանապարհների այն տեղամասերում, որտեղ երթևեկության ռեժիմը որոշվում է գծանշման միջոցով, և եթե դրանք դժվար տեսանելի են (ձյուն, ցեխ և այլն) կամ ժամանակին չեն կարող վերականգնվել, ապա կարող են տեղակայվել նույն նշանակությունն ունեցող ճանապարհային նշաններ:

16. Գծանշման վերականգնումն անհրաժեշտ է կատարել գործող տեխնիկական և շինարարական նորմերին համապատասխան:

17. Գծանշման կառչման գործակիցը չպետք է պակաս լինի ծածկի կառչման 0,75 գործակցից:

Հավելված 4

ՀՀ Գեղարքունիքի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշման աշխատանքների

Ծրագրի անվանումը	Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների նշագծում
Ֆինանսավորման աղբյուր	2022թ. ՀՀ պետական բյուջե
Պատվիրատու	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
Աշխատանքի անվանումը	ՀՀ Գեղարքունիքի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշման աշխատանքների

		Ծ ր ա գ ի ր 2 0 2 2 թ.				
No	Ավտոճանապարհի անվանումը և պիկետաժը	Սպասարկվող ճանապարհա-հատվածների ընդհանուր երկարությունը /կմ/	Տեխնիկական կարգը	Նշագծվող ճանապարհա-հատվածների երկարությունը /կմ/	1կմ-ում միջին նշագծման մակերեսը /քմ /	Ընդամենը նշագծման մակերեսը /քմ /
	Գավառի տարածաշրջան					
1	Մ-10, Սևան-Մարտունի-Գետափ կմ 17,0-կմ49,0	36,30	II-IV	32,00	255	8160
2	Նորատուսի տրանսպորտային հանգույց	2,50	II-IV	2,50	55	137,5
3	Հ-39, Մ10-Գավառ-Մ10 կմ 0-կմ 4,5	4,50	II-IV	4,50	255	1147,5
4	/Մ10/- Հայրավանքի եկեղեցի կմ 0- կմ 0,5	0,50	II-IV	0,50	255	127,5
	Ընդամենը			**39,50**		**9572,5**
	Միջպետական - II-IV			**34,5**		**8297,5**
	Հանրապետական - II-IV			**5,00**		**1275,00**
	Մարտունու տարածաշրջան					
1	Մ-10, Սևան-Մարտունի-Գետափ կմ 49,0- կմ 91,8	42,80	II-IV	17,00	255	4335
2				11,80	55	649
3	Մ-11, Մարտունի-Վարդենիս-ԱՀ սահմն կմ0-կմ20,7	20,70	II-IV	14,80	255	3774
	Ընդամենը			**31,80**		**8758,00**
	Միջպետական - II-IV			**31,80**		**8758,00**
	Հանրապետական - II-IV			**0,00**		**0,0**
	Վարդենիսի տարածաշրջան					
1	Մ-11, Մարտունի-Վարդենիս-ԱՀ սահման կմ 20.7-կմ 56,2	35,50	II-IV	31,80	255	8109
2	Մ-14, Մ-4-Շորժա-Վարդենիս կմ63.7-կմ97.8	34,10	II-IV	34,10	255	8695,5
	Ընդամենը			**65,90**		**16804,5**
	Միջպետական - II-IV			**65,90**		**16804,5**

	Հանրապետական - II-IV			**0,00**		**0,0**
	Ճամբարակի տարածաշրջան					
1	Մ-14, Մ-4-Շորժա-Վարդենիս կմ 12,2-կմ 63,7	51,50	II-IV	51,50	255	13132,5
2	Հ-30, Մ-4-Ճամբարակ-Մ14 կմ10.1 -կմ55.2	45,10	II-IV	41,20	55	2266
3	Մոտեցում Արծվաշենին կմ 0-կմ 5,0	5,00	II-IV	0,00	55	0
	Ընդամենը			**92,70**		**15398,5**
	Միջպետական - II-IV			**51,50**		**13132,5**
	Հանրապետական - II-IV			**41,2**		**2266,0**
	Սևանի տարածաշրջան					
1	Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադր,սահման կմ 51,2-կմ 80,92	29,72	I	22,00	900	19800
			II-IV	7,72	255	1968,6
2	Գագարինի տրնսպորտային հանգույց	1,90	II-IV	1,90	55	104,5
3	Սևանի տրնսպորտային հանգույց	2,69	II-IV	2,69	55	147,95
4	Հ29, Սևան-Ծաղկունք-Զովաբեր կմ 0- կմ 16,8	16,80	II-IV	16,80	55	924
5	Մ10, Սևան-Մարտունի-Գետափ կմ0,0-կմ12,7	12,70	I	1,00	900	900
			II-IV	2,82	255	719,1
6	Մ-14, Մ-4-Շորժա-Վարդենիս կմ0 -կմ 12,2	12,20	II-IV	0,00	255	0
7	Հ53, Մ4-Սեմյոնովկա-Մ4 կմ 0-կմ 11,8	11,80	II-IV	11,80	55	649
8	Հ-84, Մ4-Սևան-Մ4 կմ 0- կմ 1,1	11,80	II-IV	1,10	55	60,5
9	Հ-78, Մ4- Սևանի թերակղզի կմ0-կմ 1,1	1,50	II-IV	1,50	255	382,5
	Ընդամենը			**69,33**		**25656,15**
	Միջպետական - I			**23,00**		**20700,00**
	Միջպետական - II-IV			**15,1**		**2940,2**
	Հանրապետական - II-IV			**31,2**		**2016,0**

Հավելված 6

ՀՀ Լոռու մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշման աշխատանքների

Ծրագրի անվանումը	Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների նշագծում
Ֆինանսավորման աղբյուր	2022թ. ՀՀ պետական բյուջե
Պատվիրատու	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
Աշխատանքի անվանումը	ՀՀ Լոռու մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշման աշխատանքների

No	Ավտոճանապարհի անվանումը և պիկետաժը	Ծրագիր 2022թ.				
		Սպասարկվող ճանապարհա-հատվածների ընդհանուր երկարությունը	Տեխնիկական կարգը	Նշագծվող ճանապարհա-հատվածների երկարությունը	1կմ-ում միջին նշագծման մակերեսը /քմ /	Ընդամենը նշագծման մակերեսը /քմ /
	Թումանյանի տարածաշրջան					
1	Մ-6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման կմ 33,8-կմ 76,9	43.1 կմ	II-IV	4,65	255	1185,8
2	Հ-22 ՄՃ/Մ-6/-Դսեղ-Հ70 կմ 0.0-կմ 13,9	13,9 կմ	II-IV	8,00	55	440,0
3	Հ-25 Մ-6-Հաղպատի հուշարձան կմ0- կմ 5,0	5,0 կմ	II-IV	5,00	255	1275,0
4	Հ33, Մ3-Ստեփանավան-Յաղդան-Այգեհատ կմ18.4-կմ24,2	5,8 կմ	II-IV	5,30	55	291,5
5	Հ-35 Մ6-Օձուն-Արևաձագ-Հ24 կմ 0.0- կմ22,4	22.4կմ	II-IV	14,80	55	814,0
	Ընդամենը			**37,75**		**4006,25**
	Միջպետական - II-IV			**4,65**		**1185,75**
	Հանրապետական - II-IV			**33,10**		**2820,50**
	Գուգարքի տարածաշրջան					
1	Մ-3 Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման կմ122,4-կմ135,2 /առանց Պուշկինի թունելի/	12,8 կմ	II-IV	8,00	255	2040,0
2	Մ-6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման կմ 0-կմ 33,8	33.8 կմ	II-IV	33,80	255	8619,0
3	Մ-8 Վանաձոր-Դիլիջան կմ 10.5-կմ 34.2	23,7 կմ	II-IV	23,70	255	6043,5
	Ընդամենը			**65,50**		**16702,50**
	Միջպետական - II-IV			**65,50**		**16702,50**
	Հանրապետական - II-IV			**0,00**		**0,0**
	Ստեփանավանի տարածաշրջան					
1	Մ-3 Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման կմ 137,2-կմ163,2	26,2 կմ	II-IV	3,80	255	969,0
2	Հ-24 Մ-3-Գյուլագարակ-Կուրթան-Մ-6 կմ0-կմ16,4	16,4 կմ	II-IV	7,50	55	412,5
3	Հ-33, Ստեփանավան-Յաղդան-Հ35 կմ0.0 -կմ23.6	18,4 կմ	II-IV	10,30	55	566,5
4	Հ33-Լոռի Բերդ ամրոց կմ 0-կմ 2,0	2,0 կմ	II-IV	2,00	255	510,0
5	Հ-34 Ստեփանավան-Պրիվոլնոյե-Ախքորփի կմ 0-կմ	34,2 կմ	II-IV	18,00	55	990,0

	18,0					
	Ընդամենը			**41,60**		**3448,00**
	Միջպետական - II-IV			**3,80**		**969,00**
	Հանրապետական - II-IV			**37,80**		**2479,00**
		Սպիտակի տարածաշրջան				
1	Մ-3 Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման կմ 96.4- կմ 122,4	26,0 կմ	II-IV	18,30	255	4666,5
2	Մ-7 Սպիտակ-Գյումրի-Թուրքիայի սահման կմ 0-կմ27,2 /առանց Նալբանդի թունելի/	26,3 կմ	II-IV	26,12	255	6660,6
	Ընդամենը			**44,42**		**11327,1**
	Միջպետական - II-IV			**44,42**		**11327,1**
	Հանրապետական - II-IV			**0,00**		**0,0**
		Տաշիրի տարածաշրջան				
1	Մ-3 Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման կմ 176,9-կմ183,7	20,5 կմ	II-IV	6,80	255	1734,0
2	Հ-31, Մ1-Վարդաղբյուր-Տաշիր-Մ3 կմ 35,3-կմ 45,3	10 կմ	II-IV	10,00	255	2550,0
3	Հ59, Մ3-Սարչապետ կմ 0-կմ 8,2	8,2 կմ	II-IV	8,20	55	451,0
4	Հ60, Մ3-Մեծավան-Զյունաշող կմ 0-կմ 12,8	12,8 կմ	II-IV	8	55	440,0
	Ընդամենը			**33,00**		**5175,00**
	Միջպետական - II-IV			**6,8**		**1734,0**
	Հանրապետական - II-IV			**26,20**		**3441,00**

Գլուխ 9

ՀՀ Տավուշի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշման աշխատանքների

Ծրագրի անվանումը	Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների նշագծում
Ֆինանսավորման աղբյուր	2022թ. ՀՀ պետական բյուջե
Պատվիրատու	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
Աշխատանքի անվանումը	ՀՀ Տավուշի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշման աշխատանքների

		Ծ ր ա գ ի ր 2 0 2 2 թ.				
No	Ավտոճանապարհի	Սպասարկվող	Տեխնիկական	Նշագծվող	1կմ-ում	Ընդամենը

	անվանումը և պիկետաժը	ճանապարհա-հատվածների ընդհանուր երկարությունը	կարգը	ճանապարհա-հատվածների երկարությունը	միջին նշագծման մակերեսը /քմ /	նշագծման մակերեսը /քմ /
			Դիլիջանի տարածաշրջան			
1	Մ-4 Երևան-Սևան-Իջևան-Ադր.սահման կմ 83,2-կմ111,7	28,5 կմ	II-IV	23,50	255,00	5992,5
2	Մ-8 Վանաձոր-Դիլիջան կմ 34.2-կմ42.0	7,8 կմ	II-IV	7,80	255,00	1989,0
3	Հ-30 Մ4-Ճամբարակ-Դրախտիկ կմ0-կմ10.1	10.1կմ	II-IV	0,00	55,00	0,0
4	Հ-51 Մ4-Հաղարծինի հուշարձան կմ 0-կմ6,0	6,0 կմ	II-IV	6,00	255,00	1530,0
5	Հ53, Մ4-Սեմյոնովկա-Մ4 կմ 11,8 -կմ 13,9	2,1 կմ	II-IV	2,10	55,00	115,5
6	Հ-73, Մ4-Պարզ լիճ կմ 0- կմ 9,5	9,5 կմ	II-IV	8,20	255,00	2091,0
7	Մոտեցում Գոշավանքին	3,9կմ	II-IV	0,00	55,00	0,0
	Ընդամենը			**47,60**		**11718,0**
	Միջպետական - II-IV			**31,3**		**7981,5**
	Հանրապետական - II-IV			**16,3**		**3736,5**
			Իջևանի տարածաշրջան			
1	Մ-4 Երևան-Սևան-Իջևան-Ադր.սահման կմ111,7-կմ 148,0	36,3կմ	II-IV	36,30	255,00	9256,5
2	Մ-16 Մ-4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ6 կմ 0-կմ 12,8	12,8 կմ	II-IV	12,80	255,00	3264,0
3	Հ-37 Մ-4-Այգեհովիտ-Վազաշեն-Պարավաքար-Այգեպար կմ 0.0-կմ17,3	17,3 կմ	II-IV	17,30	55,00	951,5
4	Շրջանցիկ ավտոճանապարհ	3,2 կմ	II-IV	3,20	55,00	176,0

5	Հ-26, Մ4-Ենոքավան--Կարմիր գյող-Մ16 կմ 0- կմ 5,6	5,6 կմ	II-IV	5,60	55,00	308,0
6	Հ-61, Մ16-Բերքաբեր կմ 0-կմ 3,8	3,8 կմ	II-IV	3,80	55,00	209,0
7	Հ-87, Մ16-Աչաջուր-Մակարավանք կմ 0-կմ 10,8	10,8 կմ	II-IV	10,80	55,00	594,0
	Ընդամենը			**86,60**		**14759,0**
	Միջպետական - II-IV			**49,1**		**12520,5**
	Հանրապետական - II-IV			**37,50**		**2238,50**
	Նոյեմբերյանի տարածաշրջան					
1	Մ-6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման կմ 83,0-կմ 91,2	14,3 կմ	II-IV	0,00	255,00	0,0
2	Մ-16 Մ-4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ6 կմ 12,8-կմ59,0	46,2 կմ	II-IV	46,20	255,00	11781,0
3	Հ-54 ՄՃ/Մ16/-Բաղանիս-ՄՃ/Մ-16/ կմ0.0- կմ 6,3	6,3 կմ	II-IV	6,10	55,00	335,5
4	Հ-62, Նոյեմբերյան-Դովեխ կմ 0-կմ 3,5	3,5 կմ	II-IV	3,50	55,00	192,5
5	Հ-63, Մ16-Ոսկեվան-Կոթի-Բարեկամավան կմ 0 -կմ 18,0	18 կմ	II-IV	18,00	55,00	990,0
	Ընդամենը			**73,80**		**13299,0**
	Միջպետական - II-IV			**46,20**		**11781,0**
	Հանրապետական - II-IV			**27,60**		**1518,00**
	Տավուշի տարածաշրջան					
1	Հ-36 Իջևան-Նավուր-Բերդ-Այգեպար կմ 45,2-կմ67,5	42,5կմ	II-IV	21,10	55,00	1160,5
2	Հ-37 Մ-4-Այգեհովիտ-Վազաշեն-	7.0կմ	II-IV	7,00	55,00	385,0

	Պարավաքար-Այգեպար կմ18.0-կմ25					
3	Հ64, Բերդ-Արծվաբերդ-Չինարի կմ 0- կմ 32,5	32,5 կմ	II-IV	32,50	55,00	1787,5
4	Հ89, /Հ37/-Վարագավան-Տավուշ-Հ36 կմ 0-կմ 19,2	20,5 կմ	II-IV	19,20	55,00	1056,0
5	Հ90, /Հ89/-Վարագավանքի պատմական հուշարձան կմ 0-կմ 4,4	4,4 կմ	II-IV	4,40	55,00	242,0
	Ընդամենը			**84,20**		**4631,0**
	Հանրապետական - II-IV			**84,20**		**4631,0**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02815457

Գլխավոր քարտուղար
Ա. Երիցյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Ռեգիոնստրոյսերվիս» ՍՊԸ
ք. Երևան, Միկոյան 4շ.29բն
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150021392572591
ՀՀՎՀ 02835332

Հ. Ստեփանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.1
« » « » 2022թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/01Շ-2 ծածկագրով պայմանագրի

ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԾԱՎԱԼԸ ԵՎ ՄԵԿ ՄԻԱՎՈՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԳԻՆԸ

4-րդ, 6-րդ և 9-րդ չափաբաժինների համար

Չափաբաժնի համարը	Գնման առարկայի անվանում	Ընդհամենը նշագծման մակրեսը 2022թ. համար /քմ/	1քմ արժեքը / ՀՀ դրամ/	Ընդամենը 2022թ. համար /ՀՀ Դրամ/
4	ՀՀ Գեղարքունիքի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշման աշխատանքների	76 189.65	1022,2	77 880 000
6	ՀՀ Լոռու մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշման աշխատանքների	40 658.85	1032	42 000 000
9	ՀՀ Տավուշի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշման աշխատանքների	44 407.0	1080	47 959 560

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների
նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02815457

Գլխավոր քարտուղար
Ա. Երիցյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Ռեգիոնստրոյսերվիս» ՍՊԸ
ք. Երևան, Միկոյան 4շ.29բն
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150021392572591
ՀՀՎՀ 02835332

Հ. Ստեփանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
« » « » 2022թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/01Շ-2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում						
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
4	45231176/65	ՀՀ Գեղարքունիքի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշման աշխատանքներ	-	77 880 000	77 880 000	77 880 000	77 880 000	77 880 000	77 880 000
6	45231176/67	ՀՀ Լոռու մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշման աշխատանքների	-	42 000 000	42 000 000	42 000 000	42 000 000	42 000 000	42 000 000
9	45231176/70	ՀՀ Տավուշի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշման աշխատանքներ	-	47 959 560	47 959 560	47 959 560	47 959 560	47 959 560	47 959 560

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների
նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02815457

Գլխավոր քարտուղար
Ա. Երիցյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Ռեգիոնստրոյսերվիս» ՍՊԸ
ք. Երևան, Միկոյան 4շ.29բն
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150021392572591
ՀՎՀՀ 02835332

Հ. Ստեփանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
« » « » 2022թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/01Շ-2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
« » « » 2022թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/01Շ-2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուիանունը

Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
___

պայմանագրի կնքման ամսաթիվը

պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց **Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____ _____
ազգանուն, անուն ազգանուն, անուն

_____ _____
ստորագրություն ստորագրություն